սում գոյութիւն ունի ազգային-մշակութային ինքնավարութիւն, փոքրամասնութեանց համար: Սահմանափակումներ Անդրկովկասում: Ի՞նչպէս են հոգացւում, օրինակ, Վրաստանի հայ, թաթար, ռուս, յոյն, հրեայ, եւ կամ Ատրբէջանի հայ, ռուս, քիւրդ, լեռնական, թաթ-թալիշ, Հայաստանի էլ թաթար, ռուս եւ եզիտի փոքրամասնութեանց մշակութային կարիքները: Այս վերջիններն են՝ լեզու, դպրոց, գրականութիւն եւ արուեստ, մայրենի լեզուով դատավարութիւն եւ յարաբերութիւն պետական-հանրային մարմինների հետ, եւ այլն: Այդ բաւական չէ: Ազգային-մշակութային իրաւունքները պաշտպանելու, մշակութային գործառնութիւնները կազմակերպելու եւ յաջողապէս վարելու համար անհրաժեշտ է, որ տուեալ պետականութեան փոքրամասնութիւնները որպէս այդպիսիք կազմակերպուին առանձին-առանձին, ստեղծեն իրենց իրաւաբանական մարմինները: Ուրիշ խօսքով, ինչպէս որ հողային ինքնավարութիւնները ունին իրենց պետական վարիչ մարմինները (կառավարութիւն կամ կոմիսարների խորհուրդ, կեդրոն, գործադիր մարմին, եւայլն), նման իրաւունք պէտք է ունենան նաեւ տուեալ պետականութեան ազգային փոքրամասնութիւնները ,իրենց մշակութային կարիքների համար: Մինչ հողային ինքնավարութեանց օրգանների իրաւասութիւնը որոշ հողամասի վրայ միայն տարածւում է, մշակութային օրգաններինը, ընդհակառակը, ընդգրկելու է տուեալ հանրապետութեան ողջ երկրամասը, ինչ հարկաւ այս ինչ կամ այն ինչ ազգութեան մշակութային գործերը կազմակերպելու եւ վարելու խնդրին է վերաբերում:

Կարճ՝ ազգային-մշակութային ինքնավարութիւնը, եթէ միայն խաթարուած չէ նրա գաղափարը ,ներկայացնելու է մի տեսակ արտերկրային (էքստերիտորիալ) իշխանութիւն տուեալ փոքրամասնութեան մշակութային կարիքների համար:

II

Այսպէս են հասկանում եւ ձեւակերպում ազգային-մշակութային ինքնավարութեան էութիւնը՝ ինչպէս բուրժուական-դեմոկրատական, այլ եւ ընկերվարական տեսաբանները: Այդ սկզբունքն է նաեւ ազգային-մշակութային ինքնորոշման սկզբունքը, որի իրականացումը առաջադրւում է այսօր բոլոր յառաջադէմ տարրերի կողմից:

Նախ քան խօսելը այն մասին, թէ այդ սկզբունքը ի՛նչպէս է կիրարկւում անդրկովկասեան իրականութեան մէջ, Խորհրդային վարչաձեւի տակ, առաջ բերենք այստեղ, թէկուզ բաղդատութեան համար, ազգային-մշակութային ինքնավարութեան մի նմուշ, առնուած բուրժուական իրականութիւնից: Նա վերաբերում է Բալթիկ երկիրների մէկին, Էսթոնիային, որ, ինչպէս յայտնի է, ընդամէնը տասը տարի է ինչ անջատուել է Ռուսաստանից եւ հիմը դրել իր անկախ պետականութեան: Ճիշդ է, բոլշեւիկները իրենց յեղափոխական առաջին մակընթացութեան օրերին իսկ՝ ուղեցին դէնքի ուժով վերադարձել ինչպէս այդ, այնպէս նաեւ հարեւան բալթիկ միւս պետութիւնները, բայց չարաչար ձախողեցան ու նահանջել հարկադրուեցան: Անկարեւոր չէ թերեւս յիշատակել նաեւ, որ Էսթոնիան ամենափոքրն է Բալթիկ պետութեանց շարքում,— թէ՛ տարածութեամբ եւ թէ՛ բնակիչների թըւով: Հազիւ 1 միլիոն 100 հազար բնակիչ ունի նա, ուրեմն ոչ շատ աւելի, քան այսօրուան Հայաստանը: Եւ սակայն դա պատճառ չէ, որ Էսթոնիան պետականօրէն լաւ կազմակերպուած չլինի, որ նա անթերի կերպով չկիրառէ նաեւ մշակութային ինքնավարութիւնը՝ իր ազգային փոքրամասնութեանց համար:

Էսթոնական պետութեան հիմնադրութեան սկզբից իսկ՝ վարիչների լուրջ մտահոգութեան եւ ջերմ վերաբերմունքի առարկայ է եղած ազգային փոքրամասնութեանց խնդրի յաջող կարգադրութիւնը: Դեռ 1918 թուականի «մանիֆեստի» մէջ նա գտել է իր արտայայտութիւնը: Եւ Էսթոնիան, իր սեփական պետականութիւնը քիչ-շատ ամրապնդելուց յետոյ, անմիջապէս քննել եւ յաջողապէս լուծել է ազգային փոքրամասնութեանց մշակութային ինքնավարութեան հարցը:

Համաձայն այդ ինքնավարութեան՝ ամէն մի ազգային փոքրամասնութիւն իրաւունք ունի, երկրի ընդհանուր օրէնսդրութեան սահմաններում, ի՛նքը կարգադրելու եւ վարելու